

# «ՀՈԲԵԼՅԱՐԸ». ՆՈՐ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԼ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԾՆՆԴՅԱՆ 165- ԱՄՅԱԿԻՆ

Posted on February 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



**Լառա Դանիելյան, Երևան, 5 Փետրվար 2023**

Եղիշէ Չարենցի անվան Գրականութեան և արվեստի թանգարանը Ալեքսանդր Շիրվանզադէի (Մովսիսյան, 1858-1935) ծննդան 165-ամյակը նշում է հետաքրքիր, հարուստ ու բազմաբովանդակ ցուցադրական նյութով հագեցած ժամանակավոր ցուցադրութեամբ: Թանգարանի ֆոնդերում պահվող՝ մեր գրականութեան մեծերից մեկի հավաքածուն ամենախոշոր արխիվներից է: Այն վերջերս համալրվեց Լոր Լվիրատվութիւններով:

Փետրվարի 2-ին՝ ցուցադրութեան բացմանը, Գրականութեան և արվեստի թանգարանի տնօրէն Վահագն Սարգսյանը նշեց. «Լրանում է մեր մեծ վիպագրի 165-ամյակը: Մենք այդ առիթով կազմակերպել ենք նրա իրերի, փաստաթղթերի, նամակների, ձեռագրերի, նաև՝ գեղանկարների ցուցադրութիւն: Մեր թանգարանի ամենամեծ ֆոնդերից է Շիրվանզադէինը: Ուզում եմ հատկապէս նշել, որ անցած տարի ունեցանք համալրում, և կարծես թէ ամփոփվեց ու ավարտին հասավ Շիրվանզադէի ամբողջ ժառանգութիւնը: Մոսկվայից բերվեցին Շիրվանզադէի մի շարք ձեռագրեր՝ նամակներ, փաստաթղթեր, և այլն, ինչպէս նաև աղջկա քանդակը, որը պահպանել էր ընտանիքը: Այս բոլորը շատ զգուշութեամբ հասցրեցին թանգարան»:

Թանգարանում են պահվում գրողի կահ-կարասին, ձեռագրերը և մնացած ամբողջ ժառանգութիւնը: Տնօրէնի խոսքով՝ տարվա ընթացքում նախատեսվում են հոբելյարին Լվիրված ևս մի քանի միջոցառումներ:



Գրականության և

արվեստի թանգարանի գիտական քարտուղար Մարինե Հարոյանն ասաց, թե Շիրվանզադեի հոբեյաններին միշտ անդրադարձ է եղել անգամ նրա կենդանության օրոք. «Մտածում էի՝ ի՞նչ ցուցադրել, որ Լորություն բերի, հետաքրքիր լինի: Երբ Լորից պրպտեցի գրողի արխիվը, հասկացա, որ շատ մեծ քանակությամբ Լորներ ունենք Շիրվանզադեի գրական գործունեության 30 և 50-ամյա հոբեյաններին նվիրված: Ու միանգամից հասկացանք. սրանք հենց այդ հետաքրքրական Լորներն են՝ ուղերձներ, հեռագրեր, նվերներ... Իսկ ինչո՞ւ չանել այդ տիպի ցուցադրություն: Ցուցադրությունը կոչեցինք «Հոբեյարը»:

Տիկին Հարոյանը հավելեց. «1911 թվականին երբ նշվում էր Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյակը, ստեղծվել է հանձնաժողով: Հայ ժողովուրդը այդ տարիների դեռ պետականություն չունեի, բայց զարմանում ես ծանոթանալով Լորի ուղերձներին. հասկանում ես, որ մենք ունեցել ենք շատ կազմակերպված հասարակություն, բարեգործական, մասնագիտական, հասարակական, կրթական եւ այլ բազմաթիվ ընկերություններ: Եվ այս բոլոր ուղերձները, որ ցուցահանդեսում տեսնում եք, այդ հասարակական կազմակերպությունների աշխույժ գործունեության արդյունքն են»:



Ըստ Մարինե

Հարոյանի՝ Շիրվանզադեի արխիվը մշակութաբանների համար ուսումնասիրության հսկայական նյութ է պարունակում: Արխիվում մեծաքանակ տեղեկատվություն կա գրողի ապրած ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունների մասին, մասնավորաբար հասարակության մեջ կանանց դերի վերաբերյալ: Նույնիսկ կարելի է անել լեզվաբանական հետաքրքիր ուսումնասիրություն՝ ինչպե՞ս էին դիմում միմյանց, ի՞նչ բառապաշար էին օգտագործում. «Օրինակ՝ մենք այսօր մեր գնահատանքի խոսքում կիրառում ենք «երկրպագուներ» բառը, իսկ այս ուղերձներից տեղեկանում ենք, որ այդ ժամանակաշրջանի խոսույթում այն համարժեք է եղել «հարգող» բառին», - նշում է Հարոյանը:

Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը «Հոբեյարը» խորագրի ներքո ներկայացնում է Շիրվանզադեի գրական գործունեության 30 և 50-ամյա հոբեյաններին առնչվող արժեքավոր 300 ցուցանմուշ:

Ցուցադրությունը հանրության առաջ բաց կլինի մեկ ամիս:

**There are no comments yet.**